Սոցիալական Ապահովություն ՄԻԱՎ/ ՁԻԱՀ -ով ապրող մարդկանց համար

Բովանդակություն

Երկու ծրագրով վճարվող նպաստներ	1
Ի՞նչպես որակավորվում եմ Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստների	2
Ի՞նչ եմ ստանալու Սոցիալական Ապահովությունից	2
Ինչպե՞ս որակավորվում եմ Լրացուցիչ Ապահովության Եկամուտի հաշմանդամության վճարումներ ստանալու	2
Ի՞նչպես կարող եմ դիմում անել նպաստներ ստանալու համար	2
Ինչպես որոշում կայացնում ենք	3
Ի՞նչպես կարող եմ օգնել իմ դիմումը արագացնելու համար	3
Եթե աշխատանքի վերադառնամ	4
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Եթե դուք ՄԻԱՎ/ՁԻԱՀ (HIV/AIDS) ունեք եւ չեք կարող աշխատել, դուք կարող եք իրավասու լինել Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստների: Պետք է ակնկալվի որ ձեր հաշմանդամությունը մեկ տարի շարունակվի կամ ձեր մահվան պատճառ լինի, եւ նա բավականաչափ լուրջ լինի, որպեսզի արգելք դառնա ձեր կողմից բաւարար նիւթական հասույթ ստանալու կարողության (substantial gainful activity): Բաւարար նիւթական հասույթ համարվող գումարը յուրաքանչյուր տարի փոխվում է: Ընթացիք արժեքների համար հաճեցեք կարդալ *Տեղեկությունների Նորություն* (հրատարակություն՝ թիւ 05-10003-AM):

Եթե ձեր երեխան ունի ՄԻԱՎ/ՁԻԱՀ, ան կարող է ստանալ Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI), եթե ձեր ընտանիքի եկամուտը բավականաչափ ցածր է:

Երկու ծրագրով վճարվող նպաստներ

Մենք ունենք հաշմանդամության երկու ծրագիրներ: Սոցիալական Ապահովության հաշմանդամության ծրագիրը նպաստներ է վճարում այն մարդկանց, որոնք վճարել են Սոցիալական Ապահովության հարկեր աշխատանքի ընթացքում: Լրացուցիչ Ապահովության Եկամուտի ծրագիրը օգնում է այն մարդկանց որոնք ունեն փոքր

եկամուտ եւ ցածր դրամական միջոցներ։ Եթե ձեր Սոցիալական Ապահովության նպաստները ցածր են եւ ձեր մնացյալ եկամուտն ու դրամական միջոցները սահմանափակ, դուք կարող եք երկու ծրագիրներից նպաստներ ստանալ։

Ի՞նչպես որակավորվում եմ Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստների

Երբ դուք աշխատում եւ վճարում եք Սոցիալական Ապահովության հարկեր, դուք վաստակում եք Սոցիալական Ապահովության վարկեր։ (Մի անձ առավելագույնը վաստակում է տարեկան չորս վարկեր)։ Հաշմանդամության նպաստներ ստանալու համար որոշ տարիներու աշխատանքի պետք ունեք, իսկ պետք եղած վարկերու քանակը կախյալ է հաշմանդամի տարիքից։ Սովորաբար, պետք է աշխատած լինեք հինգ տարի՝ հաշմանդամ դառնալուց առաջ 10 տարվա ընթացքում։ Երիտասարդ աշխատողներից պահանջվում է ավելի նվազ աշխատանքային տարիներ։ Եթե ձեր հաշմանդամության դիմումը ընդունվի, ձեր Սոցիալական Ապահովության հաշմանդամության առաջին նպաստը վճարվում է ձեր հաշմանդամությունը սկսվելու պահից ամբողջական վեցերորդ ամսվա համար։

Ի՞նչ եմ ստանալու Սոցիալական Ապահովությունից

Ձեր ամսական նպաստի գումարը կախյալ է ձեր աշխատելու ընթացքում վաստակած եկամուտից։ Դուք նաեւ կստանաք Մետիքէր 24 ամիս հաշմանդամության նպաստներ ստանալուց հետո։ Մետիքէրը օգնում է վճարել հիվանդանոցներում եւ հանգստաատուներում ստացված խնամքի, տարրալուծարանի քննությունների, տնային բժշկական խնամքի եւ այլ բժշկական ծառայությունների համար։ Մետիքէրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար կարդացեք *Medicare* (հրատարակություն՝ թիւ 05-10043-AM). Այս հրատարակությունը, Մետիքէր, Հայերէն լեզվով չկա։

Ինչպե՞ս որակավորվում եմ Լրացուցիչ Ապահովության Եկամուտի հաշմանդամության վճարումներ ստանալու

Եթե դուք բավականաչափ երկար չեք աշխատել ձեր Սոցիալական Ապահովությունը ստանալու համար, կամ ձեր Սոցիալական Ապահովության նպաստները քիչ են եւ ձեր ընդհանուր եկամուտը եւ դրամական միջոցները բավականաչափ ցածր են, դուք կարող եք իրավասու լինեք Լրացուցիչ Ապահովության Եկամուտի վճարումների։

Եթե դուք ստանում եք Լրացուցիչ Ապահովության Եկամուտ, դուք շատ հավանաբար իրավասու կլինեք պարենային կտրոններ եւ Մետիքէյտ ստանալու։ Մետիքէյտը վճարում է ձեր բժշկական ծախսերը՝ հիվանդանոցում կամ հիվանդանոցից դուրս ստացված բժշկական ծառայություններին։ Որոշ նահանգներում Մետիքէյտը նաեւ վճարում է հանգստաատուներում ստացված խնամքի, անձնական բուժքույրի եւ իմունաքաղցի (ՄԻԱՀ) դեմ օգտագործվող դեղերի հետ կապված ծախսերը։ Մետիքէյտի մասին լրացուցիչ տեղեկության համար դիմեցե՛ք ձեր տեղական սոցիալական ծառայությունների գրասենյակին։

Ի՞նչպես կարող եմ դիմում անել նպաստներ ստանալու համար

Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստների համար կարող եք դիմել ելեկտրական միջոցով՝ ***www.socialsecurity.gov*** հասցեում, կամ զանգահարելով հետեւյալ անվճար թվին՝**1-800-772-1213** (խուլերը կամ դժուար լսողները պետք է զանգահարեն **1-800-325-0778** TTY թվին)։ Մենք

պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը։ Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2։ Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի։ Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին։ Թարգմանչի ծառայություններն անվճար են։ Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին։ Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ։

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն։ Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր։

Ինչպես որոշում կայացնում ենք

Մենք անմիջապես աշխատում ենք այն դիմումնագիրներու վրա, որ ստացած ենք ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող մարդկանց կողմից։ Սոցիալական Ապահովությունը յուրաքանչյուր նահանգում աշխատում է Նահանգային Հաշմանդամության Որոշման Ծառայություն կոչվող գործակալության հետ։

Այդ պետական գործակալությունը կուսումնասիրե ձեր կամ ձեր բժշկի կողմից ներկայացված տեղեկությունները, եւ կը որոշե ձեր հաշմանդամության մակարդակը ու նպաստներ ստանալու իրավասությունը։

Մենք կարող ենք անմիջապես վճարել ձեր Լրացուցիչ Ապահովության Եկամուտի նպաստները մինչեւ վեց ամսվա ժամանակաշրջանի համար՝ նախքան մեր վերջնական որոշում կայացնելը, եթե.

- Դուք չեք աշխատում.
- Դուք բավարարում եք Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դրամական միջոցների եւ եկամուտի հետ կապված պահանջներին.
- Ձեր բժիշկը կամ բժշկական այլ աղբյուրը հաստատում է, որ ձեր ՄԻԱՀ-ի մակարդակը բավականաչափ լուրջ է՝ մեր բժշկական իրավասության կանոններին համեմատելու համար։

Ի՞նչպես կարող եմ օգնել իմ դիմումը արագացնելու համար

Դուք կարող եք արագացնել ձեր դիմումի ընթացքը պատրաստ ունենալով որոշակի տեղեկություններ։ Այն ընդգրկում է.

- Ձեր Սոցիալական Ապահովության համարը եւ ծննդյան վկայականը, ինչպես նաեւ նպաստների դիմող ձեր ընտանիքի բոլոր անդամների Սոցիալական Ապահովության համարները եւ ծննդյան վկայականները.
- Ձեր W-2 թղթիկի վերջին օրինակը։ Եթե դուք դիմում եք Լրացուցիչ Ապահովության Եկամուտի, մեզ նաեւ անհրաժեշտ կլինի տեղեկություն ձեր եկամուտի եւ դրամական միջոցների մասին, օրինակ, դրամատան թուղթեր, տեղեկություններ գործազրկության մասին (unemployment), վարձքի ստացականներ եւ ինքնաշարժի արձանագրության փաստաթուղթ։

Մեզ նաեւ անհրաժեշտ են հետեւյալ տեղեկությունները.

- Բոլոր բժիշկների անունները եւ հասցեները, ինչպես նաեւ հիվանդանոցների կամ այլ բժշկական աղբիւրների հասցեները, որտեղ դուք բուժվել եք.
- Ինչպե՞ս է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը ազդում ձեր առօրյա գործունեության վրա, ինչպիսին է՝ տան մաքրությունը, կերակուրի պատրաստումը, գնումների կատարումը, փոխադրության միջոցները եւ այլն։
- Վերջին 15 տարվա ընթացքում ձեր կատարած աշխատանքի նկարագրումը.

(շրջել)

Բացի այդ, մենք կխնդրենք ձեր բժշկին լրացնել ձև, որում կնշվի, թե ինչ ազդեցություն է թողել ՄԻԱՎ վարակը ձեր առողջության վրա: Դուք կամ ձեր բժիշկը կարող եք գտնել «SSA-4814» (մեծահասակների համար) կամ «SSA-4815» (երեխաների համար) ձևը ***www.ssa.gov/forms/index.html*** կայքէջում կամ ստանալ համապասխան ձևանմուշը՝ զանգահարելով **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով: Երբ բժիշկը լրացնի և ստորագրի այդ ձևը, բերեք կամ փոստով ուղարկեք այն մեզ:

Եթե աշխատանքի վերադառնամ

Մենք ունենք հատուկ պայմաններ, որոնք թույլ են տալիս ձեր նպաստներին շարունակումը ձեր աշխատանքի վերադառնալու դեպքում: Այդ կանոնները կարեւոր են ՄԻԱՎ/ՁԻԱՀ -ով ապրող այն մարդկանց համար, որոնք կարող են աշխատանքի վերադառնալ երբ նրանց առողջությունը արտօնում է:

Այդ կանոնների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար, կարդացե՛ք *Հաշմանդամության ընթացքում աշխատելը՝ ինչպես մենք կարող ենք օգնել Հունվար (հրատարակություն՝ թիւ* 05-10095-AM*):*

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այեցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանլու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

(շրջել)

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Social Security Administration
Publication No. 05-10019-AM | April 2017
Սոցիալական Ապահովություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ -ով ապրող մարդկանց համար
Social Security For People Living With HIV/AIDS (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: